ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1534

04.05.2015թվ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԲ
ՄՏԻՑ № 1977
05 05 2015

ՀՀ ոստիկանության պետ՝
գեներալ-լեյտենանտ
պարոն Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ...
ՄՏԻՑ 2818
05 05 2015թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի մայիսի 1-ին ժամը 11.18-ին ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խումբը ահազանգ էր ստացել Խմբի թեժ հեռախոսագծին ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Կոտայքի բաժնի ՁՊՎ-ում պահվող ձերբակալված Միեր Մակվեցի Եղիազարյանի քրոջից՝ Մարինե Եղիազարյանից, առ այն որ իր եղբայրը հոգեբուժարանում գրանցված և սիստեմատիկ բուժում ստացող հոգեկան հիվանդ է և պահվում է ներկայիս պահին Կոտայքի ՁՊՎ-ում և ունի բժշկի օգնության կարիք:

Դիտորդական խմբի անդամները նույն օրը ժամը 12.30 մուտք գործելով Կոտայքի բաժին և հանդիպելով հարազատների հետ, պարզեցին որ տվյալ անձը իրոք հանդիսանում է հոգեկան հիվանդ և առկա են համապատասխան փաստաթղթերը:

Դիտորդական խմբի միջնորդությամբ, Մ. Եղիազարյանի քույրը, ըստ ՀՀ օրենսդրության պահանջի, դիմում գրեց ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Կոտայքի բաժնի ժամանակավոր պաշտոնակատարի անունով, որպեսզի եղբորը տեղափոխեն համապատասխան բուժհաստատություն՝ ներկայացնելով բոլոր փաստաթղթերը */կից ներկայացվում է դիմումը և ձերբակալվածի հիվանդության վերաբերյալ բոլոր փաստաթղթերի պատճենները -1,2,3,4,5,6 ,7,8/*

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ մինչ 03.05.2015թ. դրությամբ հոգեկան հիվանդ հանդիսացող Մ. Եղիազարյանը, ով պահվում էր Կոտայքի բաժնի ՁՊՎ-ում ոչ մի համապատասխան հաստատություն չէր տեղափոխվել:

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60

Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87

Ավելացնենք նաև, որ Դիտորդական խմբի ուսումնասիրությունների արդյունքում, արձանագրվել էր, որ ՁՊՎ-ում առկա հարազատերին տեղյակ պահելու ՁՊՎ-ում գտնվող անձի վայրի վերաբերյալ տեղեկանքը, կրում էր ձևական բնույթ, որը առաջին դեպքը չէ:

Հեռախոսահամարը, ում կատարվել էր զանգը գրանցված էր ճիշտ, սակայն զանգ տեղի չէր ունեցել, որը հաստատեց նշված հեռախոսահամարի սեփականատերը, իսկ ոստիկանները մեկնաբանեցին, որ անհասանելի է եղել:

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն կատարվածի վերաբերյալ:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ ՀասմիկՍահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1- 1570 << 15 >> 05 2015թ.

Ձեր 04.05.2015թ. թիվ 2621/1534 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ տիկին Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2015թ. մայիսի 1-ին ահազանգով ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժնի ՁՊՎ կատարած այցելության ընթացքում արձանագրված հանգամանքներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Կոտայքի մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ներկայացվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Մ.Եղիազարյանը 01.05.2015թ. ձերբակալվել և ընդունվել է Կոտայքի բաժնի ՁՊՎ: Նույն օրը վերջինիս քույրը դիմում է ներկայացրել ոստիկանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարին, որով հայտնել է, որ եղբայրը տառապում է հոգեկան հիվանդությամբ և խնդրել է նրան տեղափոխել համապատասխան բուժհիմնարկություն:

Նշված դիմումին կից փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ Մ.Եղիազարյանի մոտ ախտորոշվել է <<թեթև աստիճանի մտավոր հետամնացություն>> հիվանդություն, որն ըստ առողջական վիճակի հետազոտման թիվ 2298 ակտի հոգեկան հիվանդությամբ ախտահարված չէ:

Նկատի ունենալով, որ ըստ վերը նշված փաստաթղթերի ձերբակալված Մ.Եղիազարյանը չի տառապում հոգեկան և մասնագիտական բուժօգնության կարիք ունեցող հիվանդություններով՝ վերջինս 01.05.2015թ. մինչև 03.05.2015թ. պահվել է ոստիկանության Կոտայքի բաժնի ՁՊՎ-ում, որից հետո տեղափոխվել է ՔԿՀ:

Միաժամանակ հաշվի առնելով, որ Մ.Եղիազարյանի գործով վարույթն իրականացնում է ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժինը, ուստի դիմումը և կից փաստաթղթերը նույն օրը ուղարկվել են նշված բաժին՝ հետագա ընթացքը լուծելու համար:

Ինչ վերաբերվում է ՁՊՎ վարչակազմի կողմից ՁՊՎ ընդունվող ձերբակալվածների գտնվելու վայրի մասին վերջիններիս կողմից ընտրած անձին կապի հնարավոր միջոցով տեղյակ պահելուն և դրա վերաբերյալ տեղեկանք կազմելուն, ապա տեղեկացվում է, որ այս դեպքում ոստիկանության Կոտայքի բաժնի հերթապահ մասից մի քանի անգամ

փորձել են հեռախոսակապ հաստատել Մ.Եղիազարյանի ընտրած անձի, տվյալ դեպքում քրոջ հետ՝ զանգահարելով 098-50-24-47 բջջային հեռախասահամարին, սակայն վերջինս եղել է անհասանելի: Հեռախոսազանգի վերաբերյալ ՁՊՎ ոստիկանի կողմից կազմվել է տեղեկանք, որում սակայն չի նշվել անհասանելի լինելու հանգամանքը, քանի որ քիչ հետո ոստիկանության Կոտայքի բաժին է եկել Մ.Եղիազարյանի քույրը, ով արդեն իսկ տեղյակ է եղել եղբոր գտնվելու վայրի մասին:

ՀՀ ոստիկանության շտաբ